

**ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ
ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ
ՄԱՏՈՒՑՄԱՆ
ՊԵՏԱԿԱՆ ԳՆՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ
N ՇՀՇՁԲ-15/3-16 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 17**

ք. Երևան

«24» 03 2012թ.

ՀՀ գյուղատնտեսության նախարարության սննդամթերքի անվտանգության պետական ծառայությունը ի դեմս ծառայության աշխատակազմի ղեկավար Արմեն Միրզոյանի, որը գործում է ծառայության կանոնադրության հիման վրա (այսուհետև՝ Պատվիրատու), մի կողմից, և «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ-ն, ի դեմս Ընկերության տնօրեն Արթուր Ասրյանի (այսուհետև՝ Կատարող), մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՆՈՒՎԱԾ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում ավտոմեքենաների վերանորոգման ծառայությունների մատուցման պարտավորությունը (այսուհետև՝ Ծառայություն)՝ համաձայն սույն պայմանագրի անբաժանելի մասը կազմող N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցի պահանջների:

1.2 Ծառայությունը մատուցվում է սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան և սահմանված ժամկետներով:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Պատվիրատուն իրավունք ունի՝

2.1.1 Ցանկացած ժամանակ ստուգել Կատարողի կողմից մատուցվող Ծառայության ընթացքը և որակը՝ առանց միջամտելու Կատարողի գործունեությանը.

2.1.2 Եթե մատուցվել է սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին չհամապատասխանող Ծառայություն.

ա) Չընդունել Ծառայությունը՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի Ծառայությունը սույն պայմանագրին համապատասխանող Ծառայությամբ անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը, ինչպես նաև 5.3 կետով նախատեսված տույժը.

բ) Հրաժարվել սույն պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու Ծառայության համար վճարված գումարը և պահանջել Կատարողից վճարելու սույն պայմանագրի 5.2 կետով նախատեսված տուգանքը.

2.1.3 Միակողմանի լուծել սույն պայմանագիրը, եթե Կատարողն էականորեն խախտել է սույն պայմանագիրը: Կատարողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատուցված Ծառայությունը չի համապատասխանում սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պահանջներին,

բ) խախտվել է Ծառայության մատուցման ժամկետը:

2.2 Պատվիրատուն պարտավոր է՝

2.2.1 Քննարկել և ընդունել Տեխնիկական բնութագիր-գնման ժամանակացույցին համապատասխան մատուցված Ծառայության արդյունքը, իսկ Ծառայության արդյունքում թերություններ հայտնաբերելու դեպքերում՝ այդ մասին անհապաղ գրավոր հայտնել Կատարողին:

2.2.2 Ծառայության արդյունքն ընդունելու դեպքում Կատարողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ ժամկետի խախտման դեպքում՝ նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.3 Կատարողն իրավունք ունի՝

2.3.1 Պատվիրատուից պահանջել վճարելու իրեն վճարման ենթակա գումարները, իսկ Պատվիրատուի կողմից՝ սույն պայմանագրի 4.2 կետում նշված ժամկետի խախտման դեպքում նաև սույն պայմանագրի 5.5 կետով նախատեսված տույժը:

2.4 Կատարողը պարտավոր է՝

2.4.1 Սույն պայմանագրի N 1 հավելվածով սահմանված պայմաններով ապահովել Ծառայության մատուցումը՝ ղեկավարվելով գործող օրենսդրությամբ:

2.4.2 Սույն պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.3 Սույն պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Պատվիրատուին:

3. ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՀԱՆՁՆՄԱՆ ԵՎ ԸՆԴՈՒՆՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքներն ընդունվում են Պատվիրատուի և Կատարողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ, իսկ պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսվում է երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

Մինչև սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ավարտի օրը ներառյալ Կատարողը Պատվիրատուին է ներկայացնում մատուցված Ծառայության մասին իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության 2 օրինակ (Հավելված N 3) և պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսող փաստաթուղթը (Հավելված N 3.1):

3.2 Հանձնման-ընդունման արձանագրությունն ստորագրվում է, եթե մատուցված Ծառայությունը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրություն չի ստորագրվում և Պատվիրատուն՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար սույն պայմանագրով նախատեսված միջոցները.

բ) Կատարողի նկատմամբ կիրառում է սույն պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

3.3 Պատվիրատուն հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու պահից 5 օրյա ժամկետում Կատարողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ Ծառայությունը չընդունելու պատճառաբանված մերժումը:

3.4 Եթե Պատվիրատուն սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված ժամկետում չի ընդունում պայմանագրի արդյունքը կամ չի մերժում, ապա այն համարվում է ընդունված և սույն պայմանագրի 3.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Պատվիրատուն Կատարողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

4. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կատարողի մատուցման ենթակա Ծառայության ընդհանուր գինը կազմում է 3886900 (երեք միլիոն ութ հարյուր ութսունվեց հազար իննը հարյուր) ՀՀ դրամ, ներառյալ ԱԱՀ-ն: Գինը ներառում է Կատարողի կողմից իրականացվող բոլոր ծախսերը՝ այդ թվում հարկերը, տուրքերը և ՀՀ օրենսդրությամբ սահմանված այլ վճարները:

Ծառայության մատուցման գինը կայուն է և Կատարողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Պատվիրատուն նվազեցնելու այդ գինը:

4.2 Պատվիրատուն իրեն մատուցած Ծառայության դիմաց վճարում է անկանխիկ՝ դրամական միջոցները Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձնման-ընդունման արձանագրության հիման վրա՝ սույն պայմանագրի N 2 հավելվածով սահմանված վճարման ժամանակացույցով նախատեսված ամսում (եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո, ապա վճարումն իրականացվում է 20 րանկային օրվա ընթացքում), բայց ոչ ավելի տվյալ ժամանակահատվածի համար նախատեսված գումարի չափից: Եթե ընդունված Ծառայության դիմաց վճարելու համար վճարման ժամանակացույցով նախատեսված միջոցները չեն բավարարում, ապա վճարումը, սույն կետի պայմաններով, իրականացվում է այն ամսում, որում դրամական միջոցները նախատեսված են, սակայն ոչ ուշ քան 25 դեկտեմբերի 2017 թ.:

5. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

5.1 Կատարողը պատասխանատվություն է կրում Ծառայության մատուցման՝ սույն պայմանագրի պահանջների պահպանման համար:

5.2 Սույն պայմանագրի N 1 հավելվածում նշված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող Ծառայություն մատուցելու յուրաքանչյուր դեպքում Կատարողից գանձվում է տուգանք՝ սույն պայմանագրի 4.1 կետում նախատեսված գումարի 0,5 (զրո ամբողջ հինգ տասնորդական) տոկոսի չափով¹:

¹ Պայմանագրին օրենքի 14-րդ հոդվածի 7-րդ կետի հիման վրա կնքված փոփոխությունները հաշվարկվում է պայմանագրի գին այն մասի նկատմամբ, որի համար տվյալ տարվա ընթացքում կհատկացվեն ֆինանսական միջոցներ և կկնքվի համաձայնագիր:

5.3 Սույն պայմանագրով նախատեսված Ծառայության մատուցման ժամկետը խախտելու դեպքում Կատարողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատուցման ենթակա, սակայն չմատուցված Ծառայության գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.4 Սույն պայմանագրի 5.2 և 5.3 կետերով նախատեսված տուգանքը և տույժը հաշվարկվում և հաշվանցվում են Ծառայություն մատուցելու արդյունքում Կատարողին վճարման ենթակա գումարների հետ:

5.5 Պատվիրատուի կողմից սույն պայմանագրի 4.2 կետով նախատեսված ժամկետի խախտման դեպքում Պատվիրատուի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

5.6 Սույն պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

5.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտավորությունները լրիվ կատարելուց:

6. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆ (ՖՈՐՍ-ՄԱՔՈՐ)

Սույն պայմանագրով և սույն պայմանագրի հիման վրա կնքված Համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, զործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

7. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

7.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի սույն պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

7.2 Այն դեպքում, երբ օրենքով նախատեսված կարգով օրենքի պահանջների կատարման նկատմամբ հսկողության կամ վերահսկողության կամ բողոքների քննության արդյունքում արձանագրվում է, որ գնման գործընթացում, մինչև պայմանագրի կնքումը, Կատարողը ներկայացրել է կեղծ փաստաթղթեր (տեղեկություններ և տվյալներ), կամ վերջինիս ընտրված մասնակից ճանաչելու մասին որոշումը չի համապատասխանում Հայաստանի Հանրապետության օրենսդրությանը, ապա այդ հիմքերն ի հայտ գալուց հետո Պատվիրատուն իրավունք ունի միակողմանիորեն լուծելու պայմանագիրը, եթե արձանագրված խախտումները մինչև պայմանագրի կնքումը հայտնի լինելու դեպքում գնումների մասին Հայաստանի Հանրապետության օրենսդրության համաձայն հիմք կհանդիսանային պայմանագիրը չկնքելու համար: Ընդ որում, Պատվիրատուն չի կրում պայմանագրի միակողմանի լուծման հետևանքով Կատարողի համար առաջացող վնասների կամ բաց թողնված օգուտի ռիսկը, իսկ վերջինս պարտավոր է Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված կարգով փոխհատուցել իր մեղքով Պատվիրատուի կրած վնասներն այն ծավալով, որը չի ծածկվում մինչև լուծումը գնման պայմանագրի կատարմամբ Պատվիրատուի ստացածով:

7.3 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա սույն պայմանագրի անբաժանելի մասը:

Սույն պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով տվյալ գնումը կատարելու համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

Արգելվում է սույն պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող Ծառայության ծավալների կամ ձեռք բերվող Ծառայության միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

Պայմանագրի կողմերից անկախ գործոնների ազդեցությամբ պայմանագրի փոփոխման դեպքերը սահմանում է Հայաստանի Հանրապետության կառավարությունը:

7.6 Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև սույն պայմանագրով այդ ժամկետը լրանալը պայմանագրի կողմի առաջարկության առկայության դեպքում՝ պայմանով, որ՝ Պատվիրատուի մոտ չի վերացել գնման առարկայի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում Ծառայության մատուցման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով:

7.7 Սույն պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Կատարող կամ Պատվիրատու) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Սույն պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Կատարողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Կատարողը:

7.8 Կատարողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Պատվիրատուն, «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» ՀՀ օրենքի 10-րդ հոդվածի համաձայն, ուղարկում է Կատարողի պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով և միաժամանակ նույն օրը հրապարակում է www.gnumner.am հասցեով ինտերնետային կայքում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Կատարողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետում նշված կայքում հրապարակվելուն հաջորդող օրվանից:

7.9 Սույն պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են ՀՀ դատարաններում:

7.10 Սույն պայմանագիրը կազմված է 13 էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Սույն պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները հանդիսանում են պայմանագրի անբաժանելի մասը, յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

7.11 Սույն պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Սույն պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

7.12 Սույն պայմանագրի նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

8. ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ԱՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն
Հ/Հ 900011404119
Հ/Հ ՀՀ 00454227

Կատարող՝
«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ռուփինյանց փ. 31
«Արարատ բանկ» ԲԲԸ

Աշխ. ղեկավար _____ Վ. Միրզոյան
ստորագրություն
Կ.Տ.

Տնօրեն՝ _____ Ա. Արմատ
ստորագրություն
Կ.Տ.



Անհրաժեշտության դեպքում պայմանագրում կարող են ներառվել ՀՀ օրենսդրությանը չհակասող դրույթներ:

ՇՀԾՁԲ-15/3-16 ՀՀ ԳՆ ՍԱՊԾ 17 ծածկագրով գնման պայմանագրի

ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ-ԳՆՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ԱՎՏՈՄԵՔԵՆԱՆԵՐԻ ՎԵՐԱՆՈՐՈԳՄԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ

N	SU-1, SU-2 ծառայությունների և SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	Տրանսպորտային միջոցների մակնիշները /տեսակները/ ըստ չափաբաժինների
		4x4 տիպի ավտոմեքենաներ (Նիվա)
1	2	3
	SU-1 ներառվող ծառայությունների անվանումը	
1	Բռնկման համակարգի ստուգում	0
2	Սառեցման համակարգի ստուգում	0
3	Յուղման համակարգի ստուգում	0
4	Արտածման համակարգի ստուգում	0
5	Կցորդման համակարգի համակարգի ստուգում	0
6	ՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
7	ԱՓՏ-ի աշխատանքի ստուգում	0
8	Կարդանային փոխանցման աշխատանքի ստուգում	0
9	Բաշխիչ տուփի աշխատանքի ստուգում	0
10	Առջևի և հետևի կամրջակների աշխատանքի ստուգում	0
11	Առջևի և հետևի կախոցների աշխատանքի ստուգում	0
12	Արգելակային համակարգի աշխատանքի ստուգում	0
13	ABS համակարգի ստուգում	0
14	Էլեկտրական համակարգի աշխատանքի ստուգում	2 200
15	Ղեկավարման համակարգի աշխատանքի ստուգում	1 500
16	Թափքի վիճակի ստուգում	0
17	Տարբեր ազդեցատների յուղերի որակի և մակարդակների ստուգում	0
	SU-2 ներառվող ծառայությունների անվանում	0
18	Շարժիչի հանում և տեղադրում	33 000
19	Նույնը DOHC (2 բաշխիչ լիստոի) դեպքում	0
20	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
21	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
22	Շարժիչի վերանորոգում	55 000
23	Նույնը DOHC դեպքում	0
24	Նույնը V6-Շ դեպքում	0
25	Շարժիչի բարձիկի հանում և տեղադրում	2 500
26	Բ/լիստոի կափարիչի հանում և տեղադրում	6 600
27	Նույնը աջի համար (V6)	0
28	Նույնը ձախի համար (V6)	0
29	Շարժիչի բլոկի գլխիկի հանում և տեղադրում	17 000
30	Նույնը աջի համար (V6)	0
31	Նույնը ձախի համար (V6)	0
32	Շարժիչի գլխիկի միջադիրների փոխարինում	10
33	Շարժիչի գլխիկի վերանորոգում	28 000
34	Փականի խցուկի փոխարինում	1 100

	Նույնը V6-Շ դեպքում	0
36	Բաշխիչ լիսեռի աշխատանքի ստուգում	55
37	Նույնը V6-Շ ձախի դեպքում	0
38	Նույնը v6-ի աջի դեպքում	0
39	Նույնը DOHC դեպքում	0
40	Բաշխիչ լիսեռի խցուկի փոխարինում	1 100
41	Հրիչների փոխարինում SOHC	1 100
42	Հրիչների փոխարինում DOHC	1 100
43	Ատամնավոր փոկի փոխարինում	10
44	Ատամնավոր փոկի փոխարինում DOHC	10
45	Ատամնավոր փոկի փոխարինում V6	0
46	Ծնկածև լիսեռի առջևի խցուկի փոխարինում	1 100
47	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
48	Նույնը DOHC դեպքում	0
49	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
50	Նույնը V6-Շ դեպքում	0
51	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
52	Ծնկածև լիսեռի հետևի խցուկի փոխարինում	1 100
53	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
54	Մխոցային օդակների փոխարինում	5 000
55	Նույնը DOHC դեպքում	0
56	Նույնը V6-Շ դեպքում	0
57	Թափանիկի հանում և տեղադրում	1 100
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
58	Յուղի և յուղի գտիչի փոխարինում	0
59	Յուղի պոմպի փոխարինում	5 500
60	Նույնը DOHC դեպքում	0
61	Նույնը V6-Շ դեպքում	0
62	Ղեկավարման քլոկի վերանորոգում	2 200
63	Բռնկման կարգավորում	1 100
64	CO կարգավորում	1 100
65	Խարնարակի հանում և տեղադրում	2 200
66	Խարնարակի վերանորոգում	2 200
67	Օդի գտիչի փոխարինում	100
68	Ինժեկտորի ֆորսունկաների փոխարինում	2 200
69	Ինժեկտորի ֆորսունկաների մաքրում	2 200
70	Բենզամոլիչի փոխարինում	2 200
71	Վառելիքի գտիչի փոխարինում	2 200
72	Վառելիքի բաքի հանում և տեղադրում	1 100
73	Տրամյորի հանում և տեղադրում	0
74	Տրամյորի վերանորոգում	0
	3. Սառեցման և արտաձման համակարգ	
75	Հովիարի փոկի հանում և տեղադրում	2 200
76	Հովիարի հանում և տեղադրում	5 500
77	Ռադիատորի հանում և տեղադրում	8 800
78	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
79	Նույնը ԱՓՏ-ի դեպքում	0
80	Ռադիատորի վերանորոգում	0
81	Թերմոստատի փոխարինում	3 300
82	Ջրի պոմպի փոխարինում	5 500
83	Նույնը DOHC և V6-Շ դեպքում	0
84	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
85	Ջրի պոմպի վերանորոգում	0
86	Նույնը DOHC դեպքում	0
87	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
88	Ընդարձակվող բաքի փոխարինում	2 200

	Խլարարի հանում և տեղադրում	5 500
90	Նույնը DOHC դեպքում	0
91	Ուղղիատորի փոդրակի հանում և տեղադրում	2 200
	4. Կցորդում, ՓՏ և ԱՓՏ	
92	Բանվ. կամ գլխ. գլանի հանում և տեղադրում	3 300
93	Բանվ. կամ գլխ. գլանի վերանորոգում	1 100
94	Կցորդման սկավառակների և առնցքակալի փոխարինում	22 000
95	Կցորդման ոտնակի հանում և տեղադրում	1 100
96	Կցորդման ճոպանի հանում և տեղադրում	1 100
97	ՓՏ-ի հանում և տեղադրում	22 000
98	ՓՏ-ի վերանորոգում	66 000
99	ՓՏ-ի առանցքակալի փոխարինում	10
100	ՓՏ-ի պատյանի հանում և տեղադրում	10
101	Վազքաչափի շարժաբերի փոխարինում	1 100
102	ԱՓՏ-ի կոնվերտորի հանում և տեղադրում	0
103	ԱՓՏ-ի տանող սկավառակի փոխարինում	0
104	Նույնը V6-Շ դեպքում	0
105	ԱՓՏ-ի հանում և տեղադրում	0
106	Նույնը V6-Շ դեպքում	0
107	ԱՓՏ-ի վերանորոգում	0
108	Նույնը V6-Շ դեպքում	0
109	ԱՓՏ-ի յուղի զտիչի փոխարինում	0
	5. Բաշխիչ տուփի կարդանային լիսեռ	
110	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում	16 500
111	Բաշխիչ տուփի հանում և տեղադրում, վերանորոգումով	77 000
112	Բաշխիչ տուփի խցուկի փոխարինում	1 100
113	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում	6 600
114	Կարդանային լիսեռի հանում և տեղադրում, վերանորոգումով	2 000
115	Կարդանային լիսեռի խաչուկի հանում և տեղադրում	2 200
116	Կարդանային լիսեռի միջ.կախոցի հանում և տեղադրում	5 500
	6. Առջևի և հետևի կամրջակներ	
117	Առջևի կամ հետևի կամրջակի հանում և տեղադրում	22 000
118	Առջևի կամ հետևի կամրջ. լիակատար քանդում և հավաքում	10 000
119	Առջևի կամ հետևի կամրջ. մասնակի քանդում և հավաքում	8 000
120	Առջևի կամ հետևի կամրջ. կիսաստնու քանդում և հավաքում	5 500
121	Կիսաստնու առանցքակալի փոխարինում	1 100
	7. Կախոց	
122	Առջևի կախոցի լիակատար քանդում և հավաքում	10 000
123	Տրավերսի հանում և տեղադրում	22 000
124	Ձախ կամ աջ հողակապի հանում և տեղադրում	5 500
125	Անվակունդի առանցքակալի փոխարինում	6 600
126	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
127	Հետևի անվակունդի առանցքակալի փոխարինում	5 500
128	Նույնը հետին տանող ա/մ-երի համար	0
129	Ձախ կամ աջ հողակապի խցուկների փոխարինում	2 200
130	Ձախ կամ աջ հողակապի առանցքակալների փոխարինում	2 000
131	Ցնցամեղմիչի թասակի փոխարինում	1 100
132	Չսպանակի հանում և տեղադրում	1 100
133	Չսպակի հանում և տեղադրում	1 100
134	Չսպակի վռանների փոխարինում	1 100
135	Առջևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	3 000

	Ներքևի լծակի հանում և տեղադրում	1 100
137	Ներքևի լծակի վռանների փոխարինում	4 400
138	Առջևի աջ կամ ձախ ձգանների հանում և տեղադրում	4 400
139	Միջին ձգանի հանում և տեղադրում	3 300
140	Ճոճանակային լծակի հանում և տեղադրում	110
141	Վերևի լծակի հանում և տեղադրում	3 300
142	Վերևի լծակի վռանների փոխարինում	1 100
143	Գնդե հողակապերի փոխարինում	3 000
144	Ծայրականների հանում և տեղադրում	2 000
145	Առջևի կայունարարի հանում և տեղադրում	2 000
146	Առջևի կայունարարի վռանների փոխարինում	1 700
147	Առջևի կայունարարի առջևի վռանների փոխարինում	1 100
148	Հետևի զսպանակի փոխարինում	2 200
149	Հետևի ցնցամեղմիչի հանում և տեղադրում	2 500
150	Հետևի ձգածողի հանում և տեղադրում	2 200
151	Հետևի երկաթածողի հանում և տեղադրում	2 200
152	Կայունարարի կանգնակիների հանում և տեղադրում	10
153	Հետևի անկյունագծային լծակի հանում և տեղադրում	1 100
154	Անկյունագծային լծակի վռանների փոխարինում	1 100
155	Անվաքացքի կարգավորում	5 500
156	Զողման աշխատանքներ 1 քառ.սմ համար	1 100
	8 Ղեկային մեխանիզմ	0
157	Ղեկային կայունի հանում և տեղադրում	7 700
158	Նույնը V6-Շ դեպքում	0
159	Ղեկային կայունի վերանորոգում	16 500
160	ՂԿ-ի առանցքակայի և/կամ վռանների փոխարինում	10
161	ՂԿ-ի հողակապերի հանում և տեղադրում	10
162	Հիդրոուժեղարարաի պումպի հանում և տեղադրում	0
163	Նույնը DOHC դեպքում	0
164	Հիդրոուժեղարարաի փոկի հանում և տեղադրում	0
165	Նույնը DOHC դեպքում	0
166	Հիդրոուժեղարարաի փողրակի հանում և տեղադրում	0
167	Նույնը DOHC դեպքում	0
168	Նույնը կոնդիցիոների դեպքում	0
169	ՀՈՒ ՂԿ-ի հանում և տեղադրում	0
170	ՀՈՒ ՂԿ-ի վերանորոգում	0
	9. Արգելակային համակարգ	0
171	Գլխ.գլանի հանում և տեղադրում	4 400
172	Գլխ.գլանի վերանորոգում	5 500
173	Վակուումային ուժեղարարի հանում և տեղադրում	6 600
174	Բանվ.գլանի հանում և տեղադրում	6 600
175	Բանվ.գլանի վերանորոգում	2 000
176	Արգելակային համակարգի օդահանում	1 100
177	Առջևի սուպպորտի հանում և տեղադրում	3 850
178	Հետևի սուպպորտի հանում և տեղադրում	0
179	Առջևի սուպպորտի վերանորոգում	5 500
180	Հետևի սուպպորտի վերանորոգում	0
181	Արգելակային փողրակի փոխարինում	2 200
182	Առջևի արգելակային կոճղակների փոխարինում	3 300
183	Հետևի սկավառակային կոճղակների փոխարինում	0
184	Հետևի կոճղակների փոխարինում	4 400
185	Առջևի արգելակային սկավառակի փոխարինում	4 400
186	Հետևի արգելակային սկավառակի փոխարինում	4 400
187	Արգելակային սեղմակի հանում և տեղադրում	6 600
188	ABS-ի հանում և տեղադրում	0
189	ABS-ի վերանորոգում	0

90	Ձեռքի արգելակի ճուպանի հանում և տեղադրում	4 400
91	Ձեռքի արգելակի մեխանիզմի վերանորոգում	1 500
	10. Էլեկտրասարքավորում	
192	Էլեկտրասարքավորման վերանորոգում	1 100
193	Չափիչ սարքերի հանում և տեղադրում	2 200
194	Գններատորի հանում և տեղադրում	5 500
195	Նույնը V6-Շ դեպքում	0
196	Նույնը հիդրոուժեղարարի դեպքում	0
197	Գններատորի վերանորոգում	11 000
198	Մեկնարկիչի հանում և տեղադրում	5 500
199	Մեկնարկիչի վերանորոգում	11 000
200	Առջևի լապտերի հանում և տեղադրում	1 100
201	Հետևի լապտերի հանում և տեղադրում	1 650
202	Բռնկման կողպեքի հանում և տեղադրում	3 300
203	Վազքաչափի հանում և տեղադրում	2 200
204	Վազքաչափի ճուպանի փոխարինում	2 200
205	Սարքերի պանելի հանում և տեղադրում	5 500
206	Արագաչափի հանում և տեղադրում	1 100
207	Ազդանշանի հանում և տեղադրում	1 100
208	Ապակեվազիչի հանում և տեղադրում	2 200
209	Դռների կենտրոնական փականի հանում և տեղադրում	0
210	Ազդանշանային համակարգի տեղադրում	3 300
211	Մագնիստոլայի տեղադրում	5 500
212	Վառոցքային լարերի հանում և տեղադրում	1 100
213	Էլ/հաղորդալարերի մասնակի վերանորոգում	5 500
214	Էլ/հաղորդալարերի հիմնական խտրցի հանում և տեղ ³ ն.	8 800
215	Էլ/հաղորդալարերի երկրորդ, խտրցի հանում և տեղադրում	5 500
216	Էլեկտրական տմիչների փոխարինում	2 200
217	Էլեկտրական անջատիչների փոխարինում	500
218	Վառոցքի մոմերի փոխարինում	550
219	Կոնդիցիոների լիցքավորում	0
220	Կոնդիցիոների վերանորոգում	0
	11. Այլ ծառայություններ	
221	Ավտոմեք. թափքի հղկում և ներկում զին 1քառ.դմ-ի համ.	450
222	Ավտոմեքենայի վազում	2 200
223	Անիվի հանում և տեղադրում	110
224	Անվադողի վերանորոգում	1 100
225	Անիվի քալանսավորում	1 650
226	Անիվի վալց	2 200
227	CO-զոդման աշխատանքներ, զին 1 քառ.սմ-ի համար	1 100
228	Խառատային աշխատանքներ	2 200
229	Փականագործի աշխատանքներ	2 200
230	Քարշակի ծառայություն զին 1կմ համար	880
	SU-2 ընթացքում օգտագործվող պահեստամասերի քսայուղերի և այլ օժանդակ նյութերի անվանումները	
	1.Շարժիչ	10
1	Շարժիչի բլոկ	10
2	Շարժիչի գլխիկ	1 500
3	Բարձիկ	1 000
4	Շարժիչի գլխիկի միջադիր	800
5	Շարժիչի վերանորոգման կոմպլեկտ	11 000
6	Շարժիչի քաշխիչ լիսեռ	1 200
7	Շարժիչի փական դուրս մղող	1 200
8	Շարժիչի փական ներս մղում	900
9	Շարժիչի փականի խցուկ	10

	Ծնկածն լիսեո	700
11	Ծնկածն լիսեոի խցուկ առջևի	700
12	Ծնկածն լիսեոի խցուկ ետևի	2 500
13	Ծնկածն լիսեոի արմատական ներդիրներ	2 500
14	Ծնկածն լիսեոի շարժաթևային ներդիրներ	700
15	Հենակային տափողակ	2 000
16	Մլսոց	4 500
17	Մլսոցային օղակներ	3 500
18	Ատամնանիվ	5 000
19	ատամնավոր փուկ	4 500
20	Շղթա	2 000
21	Հիդրոձգան	1 200
22	Հրիչ	1 200
23	Հիդրոհրիչ	500
24	Բաշմակ	800
25	Հանգստարար	12 000
26	Թափանիվ	10
27	Թափանիվի պսակ	5 000
28	խցուկ բաշխիչ լիսեոի	300
29	Շկիվ	1 500
30	Շարժաթև	3 500
31	Կարտերի միջադիր	1 000
32	Միջադիր	100
	2. Ղեկավարման, սնման և յուղման համակարգ	
33	Յուղի գտիչ	1 500
34	Յուղի պոմպ	1 700
35	Յուղի պոմպի շարժաթևեր	3 000
36	Յուղի ռադիատոր	1 000
37	Յուղի փոխրակ	9 000
38	Յուղի ծորակ	800
39	Վառոցքի մոմ	10
40	Բենզոբաք	500
41	Խառնարակ	500
42	Խառնարակի վերանորոգման հավաքածու	700
43	Ինժեկտորի ֆորսունկա	10
44	Վառելանյութի մղիչ էլեկտրական	50
45	Վառելանյութի մղիչ մեխանիկական	50
46	Վառելանյութի գտիչ	5 000
47	Վառելանյութի գտիչ նուրբ մաքրման	11 000
48	Վառելանյութի փոխրակ	10
49	Աքսելերատորի ճուպան	1 000
50	Օդի գտիչ	1 000
51	Ջերմաստիճանային տվիչ	1 000
52	Յուղի տվիչ	10
53	Բաշխիչ լիսեոի տվիչ	800
54	Օդի ծախսի տվիչ	1 500
55	Արագաչափի տվիչ	1 500
56	Հովհար տվիչ	4 500
57	Ջրի տվիչ	4 000
58	Բենզոբաքի տվիչ	1 500
59	Մարման ընթացքի կարգավորիչ	800
60	Մարման ընթացքի տվիչ	800
64	Ղեկավարման համակարգիչ	2 500
65	Պարապ ընթացքի տվիչ	4 000
66	Դրոսելային փականի տվիչ	4 000
67	Թթվածնի տվիչ	4 000

3.Սառեցման և արտաձման համակարգ		
68	Հովհարի փոկ	1 000
69	Հովհար	2 500
70	Ռադիատոր	14 500
71	Ընդարձակող բաք	2 500
72	Ռադիատորի փողրակ	800
73	Թերմոստատ	2 500
74	Ջրի պոմպ	10
75	Ջրի պոմպի առանցքակալ	10
76	Ջրի պոմպի թևակ	10
77	Սառեցման հեղուկ	700
78	Ջրի պոմպի ստանիվ	10
79	Հոլովակ	500
80	Փոկ	500
81	Փոկ կոնդիցիոների	10
82	Ծորակ	600
83	Խլարարի նե րդիր	200
84	Խլարարի կախոց	200
85	Կրոնշտեյն	500
86	Անուր	500
87	Խլարար	10 000
88	Ուեզոնատոր	9 000
89	Վառարանի ռադիատոր	6 500
4.Կցորդում,ՓՏ և ԱՓՏ		
90	Կցորդման բանվորական գլան	3 500
91	Կցորդման գլխավոր կլան	5 500
92	Կցորդման գլանի վերանորոգման հավաքածու	500
93	Կցորդման տանող սկավառակ	6 500
94	Կցորդման տարվող սկավառակ	9 500
95	Կցորդման առանցքակալ	2 500
96	Կցորդման փողրակ	1 000
97	Վիտանցման տուփ	10
98	ՓՏ-ի առջևի խցուկ	300
99	ՓՏ-ի հետևի խցուկ	300
100	ՓՏ-ի առանցքակալ	2 000
101	ՓՏ-ի առաջնային լիսեռ	8 000
102	ՓՏ-ի միջանկյալ խցուկ	11 000
103	ՓՏ-ի եղանիկ	1 200
104	ՓՏ-ի ատամնանիվ	5 000
105	Համաժամիչ	10
106	Մուֆտ	6 000
107	ՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	500
108	ԱՓՏ-ի զտիչ	10
109	ԱՓՏ-ի սկավառակների հավաքածու	10
110	ԱՓՏ-ի վերանորոգման կոմպլեկտ	10
111	Տրանսմիսիոն յուղ	3 000
112	ԱՓՏ-ի յուղ	10
113	ՓՏ-ի առաջնային լիսեռ	3 200
114	Հերմետիկ	800
5. Բաշխիչ տուփ,կարդանային լիսեռ		
115	Բաշխիչ տուփ	10
116	Բաշխիչ տուփի խցուկ	500
117	Բաշխիչ տուփի առանցքակալ	2 000
118	Բաշխիչ տուփի ատամնանիվ	15 000
119	Բաշխիչ տուփի լիսեռ	18 000
120	Կարդանային լիսեռ	40 000

	Էլաստիկ մուֆտ	1 500
22	Կարդանային լիսեռի միջանկյալ հենակ	2 500
123	Կարդանային լիսեռի խաչուկ	2 500
	6.Առջևի և հետևի կամրջակներ	
124	Հետևի կամ արջևի կամրջակ	10
125	Ռեդուկտոր	75 000
126	Գլխավոր փոխանցման ատամնանիվի կոմպլեկտ	25 000
127	Դիֆֆերենցիալ	12 000
128	Դիֆֆերենցիալի սատելլիտ	2 000
129	Տանող ատամնանիվի խցուկ	500
130	Տանող ատամնանիվի առանցքակալ	2 500
131	Դիֆֆերենցիալի առանցքակալ	3 000
132	Կիսաստնի	25 000
133	Կիսաստնու առանցքակալ	2 500
134	Կիսաստնումիջադիր	200
135	Կիսաստնու խցուկ	500
136	Կարգավորիչ տափողակ	50
	7.Կախոց	
137	Տրավերս	18 000
138	Կրոնշտեյն	500
139	Ձախ կամ աջ հողակալ	12 000
140	Ձախ կամ աջ հողակալի փոշեթիկնոց	1 000
141	Անվակունդ	7 500
142	Անվակունդի խցուկ	500
143	Անվակունդի ներքին առանցքակալ	1 500
144	Անվակունդի արտաքին առանցքակալ	1 500
145	Հետևի անվակունդի արտաքին առանցքակալ	15 000
146	Հետևի անվակունդի ներքին առանցքակալ	100
147	Ձախ կամ աջ հողակալի խցուկ	5 000
148	Հարվածամեղմիչի թասակ	12 000
149	Չսպանակ	8 000
150	Առջևի հարվածամեղմիչ	4 500
151	Հարվածամեղմիչի փոշեթիկնոց	500
152	Հարվածամեղմիչի վռան	200
153	Ներքևի լծակ	15 000
154	Ներքևի լծակի վռան	900
155	Վերևի լծակ	12 000
156	Վերևի լծակի վռան	500
157	Գնդե հողակալ	1 800
158	Առջևի կայունարար	7 000
159	Առջևի կայունարարի վռան	400
160	Առջևի կայունարարի առջևի վռան	400
161	Հետևի զսպանակ	8 000
162	Հետևի ցնցամեղմիչ	4 500
163	Հետևի մետաղաձող	1 300
164	Հետևի մետաղաձողի վռան	250
165	Հետևի անկյունագծային լծակ	10
166	Անկյունագծային լծակի վռան	10
167	Չսպակ	10
168	Չսպակի վռան	10
169	Չսպակի միջադիր	10
170	Չսպակի բռնիչ	10
171	Աջ կամ ձախ ծգան	1 800
172	Ծայրակալ	1 500
173	Ձգան մեջուղի	4 000
174	Անվահիծ	36 000

	8. Ղեկային մեխանիզմ	
75	Ղեկային կալուն	4 000
176	Ղեկային կալունի առանցքակալ	1 500
177	Ղեկային կալունի խաչուկ	0
178	Հիդրոուժեղարար	40 000
179	Հիդրոուժեղարարի փոկ	3 000
180	Հիդրոուժեղարարի վերականգնումի կոմպլեկտ	12 000
181	Հիդրոուժեղարարի պոմպ	12 000
182	Հիդրոուժեղարարի պոմպի վերանորոգման կոմպլեկտ	100
183	Ղեկային ձող	4 000
184	Ղեկային ձողի ծայրակալ	1 500
185	Հիդրոուժեղարարի յուղ. L.	5 500
186	Ճոճանակ	4 500
187	Ճոճանակային վրան	400
	9. Արգելակային համակարգ	
188	Գլխ. Գլան	4 500
189	Գլխ. գլանի վերանորոգման կոմպլեկտ	500
190	Վակուումային ուժեղարար	13 000
191	Բանվ. Գլան	1 500
192	Բանվ. Գլանի վերանորոգման կոմպլեկտ	400
193	Արգելակակի փողրակ	1 500
194	Սուպպորտի ուղղորդիչ	1 000
195	Սուպպորտի մանժետ	10
196	Առջևի արգելակային կոճղակների կոմպլեկտ	2 500
197	Հետևի սկավառակային կոճղակների կոմպլեկտ	2 500
198	Հետևի թմրուկային կոճղակների կոմպլեկտ	6 000
199	Առջևի արգելակային սկավառակ	7 500
200	Հետևի արգելակային սկավառակ	7 500
201	Ձեռքի արգելակի ճոպան	1 600
202	ԱՐՏ-ի տվիչ	15 000
203	Արգելակային հեղուկ ԴՕՏ-3-800գրամ	1 200
204	Արգելակային հեղուկ ԴՕՏ-4-800գրամ	1 200
205	Ձեռքի արգելակի ճոպան	100
	10. Էլեկտրասարքավորում	
206	Գններատոր	35 000
207	Գններատորի դիոդային կամրջակ	5 000
208	Գններատորի ուել	2 500
209	Գններատորի առանցքակալ	500
210	Ստարտեր	25 000
211	Ստարտերի ուել	1 000
212	Ստարտերի ածուխ	800
213	Բենդեքս	2 500
214	Ստարտերի կցորդիչ (ավտոմատ)	5 500
215	Առջևի լապտեր	500
216	Առջևի թարթիչ	800
217	Հետևի լապտեր	500
218	Հետևի թարթիչ	800
219	Արգելակային լապտեր	500
220	Լամպ	600
221	Էլեկտրական անջատիչ	500
222	Էլեկտրական տվիչ	800
223	Էլեկտրական չափիչ սարք	10
224	Բոնկման կողպեք	4 500
225	Էլեկտրալարերի գլխավոր խուրց	25 000
226	Էլեկտրալարերի երկրորդական խուրց	500
227	Վառոցքային լարերի խուրց	500

229	Վառոցքի մոմի ծախսակալ	600
230	Վազրաչափ	300
231	Վազրաչափ ճուպան	1 500
232	Արագաչափ	10
233	Ազդանշան	10
234	Ապակեվազիչ	10
235	Ապակեվազիչի շարժիչ	1 500
236	Դռների կենտրոնական փական	10
237	Ազդանշանային համակարգ	100
238	Մագնիստոլայ	10
239	Էլեկտրաամբարձիչ	3 000
240	Էլեկտրաամբարձիչի շարժիչ	10
240	Ներկ, լուծիչ, օժանդակ նյութեր վերանորոգ. համար	գին 1 դ/մ 1 000
Ընդհամենը ըստ տրանս. միջոցի մակնիշի		

- Օգտագործվող պահեստամասերը պերր է լինեն նոր, չօգտագործված, գործարանային արտադրության:
Վերանորոգման ներկայացված ավտոմեքենան դիագնոստիկ զննման պետք է ենթարկվի ներկայացված օրը և մեկօրյա ժամկետում Պատվիրատուին հայտնի տեղեկատվություն վերանորոգման վերաբերյալ:

Ծառայության մատուցման ժամկետը	
Սկիզբը	ավարտը
Պայմանագիրը ուժի մեջ մտնելուց	20.12.2017թ.

Պատվիրատու՝
ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության
պետական ծառայության աշխատակազմ
ք. Երևան, Կոմիտաս 49/2
ՀՀ ֆինանսների նախարարության
աշխատակազմի գործառնական վարչություն



Աշխ. դեկավար
առողջագրություն

Կատարող՝
«ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
«Արարատ քանկ» ԲԲԸ



Տնօրեն՝
Մ. Նուրյան

ՎՃԱՐՄԱՆ ԺԱՄԱՆԱԿԱՑՈՒՅՑ*

ՀՀ դրամ

N	Ծառայության անվանումը	Նախատեսվում է ֆինանսավորել 2017թ.' ըստ ամիսների՝ ընդ որում												
		հունվար	փետրվար	մարտ	ապրիլ	մայիս	հունիս	հուլիս	օգոստոս	սեպտեմբեր	հոկտեմբեր	նոյեմբեր	դեկտեմբեր	Ընդամենը Տարի
1	Ավտոմեքենաների վերանորոգման ծառայություններ			386700	1358400	1358400	1358400	2330100	2330100	2330100	3886900	3886900	3886900	3886900

* Վճարման ենթակա գումարները ներկայացված են ածողական կարգով:

Պատվիրատու՝
 ՀՀ ԳՆ սննդամթերքի անվտանգության պետական ծառայության աշխատակազմ
 ք. Երևան, Կոմիտաս 49/2
 ՀՀ ֆինանսների նախարարության աշխատակազմի գործառնական վարչություն
 Հ/Հ 900011404119
 ՀՎՀՀ 00454227

Աշխ. դեկավար ստորագրություն
 Ա.Սիրզոյան



Կ.Տ

Կատարող՝
 «ՖԼԵՇ ՄՈՏՈՐՍ» ՍՊԸ
 ք. Երևան, Ռուբինյանց փ. 31
 «Արարատ բանկ» ԲԲԸ

Հ/Հ 1510012745550100
 ՀՎՀՀ 00873228

Տնօրեն
 Ա.Մանուկյան



Պայմանագրի կողմ

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

Պատվիրատու

 գտնվելու վայրը _____
 հհ _____

 հվհհ _____

**ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N
 ՀԱՆՁՆՄԱՆ-ԸՆԴՈՒՆՄԱՆ**

« » « » 20 թ.

Պայմանագրի /այսուհետ՝ Պայմանագիր/ անվանումը՝

Պայմանագրի կնքման ամսաթիվը՝ « » « » 20 թ.

Պայմանագրի համարը՝ _____ և
 Պատվիրատուն՝ ի դեմս _____
 Պայմանագրի կողմը՝ ի դեմս _____, հիմք ընդունելով
 Պայմանագրի կատարման վերաբերյալ « » « » 20 թ. կազմված՝ գնման հայտը
 նախագծած ներկայացուցչի N եզրակացությունն այն մասին, որ Պայմանագրով նախատեսված՝ ստորև
 նշված ծառայությունները համապատասխանում են Պայմանագրով ամրագրված տեխնիկական
 բնութագրերին և գնման ժամանակացույցին՝ կազմեցին սույն արձանագրությունը հետևյալի մասին.
 Պայմանագրի շրջանակներում Պայմանագրի կողմը մատուցել է հետևյալ ծառայությունները՝

Մատուցված ծառայությունների								
N	անվանումը	տեխնիկական բնութագրի համառոտ շարադրանքը	քանակական գույցանիշը		կատարման ժամկետը		վճարման ենթակա գումարը /հազար դրամ/	վճարման ժամկետը /ըստ վճարման ժամանակացույցի/
			ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի	ըստ պայմանագրով հաստատված գնման ժամանակացույցի	փաստացի		

Վերոհիշյալ ծառայությունների մատուցման վերաբերյալ բոլոր հաշիվ-ապրանքագրերը հանդիսանում են սույն արձանագրության բաղկացուցիչ մասը և կցվում են:

Ծառայությունը հանձնեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

Ծառայությունն ընդունեց

 ստորագրություն

 ազգանուն, անուն
 Կ.Տ.

ԱԿՏ N

պայմանագրի արդյունքը Պատվիրատուին հանձնելու փաստը ֆիքսելու վերաբերյալ

Սույնով արձանագրվում է, որ _____-ի (այսուհետ՝ Պատվիրատու) _____
(Պատվիրատուի անունը) և
 _____-ի (այսուհետ՝ Կատարող) միջև 20 թ. _____-ին կնքված N _____
(Կատարողի անունը)
 գնման պայմանագրի շրջանակներում Կատարողը 20 թ. _____ -- -ին հանձնման-
 ընդունման նպատակով Պատվիրատուին հանձնեց ստորև նշված ծառայությունները.

Ծառայության		
Անվանումը	Քանակական ցուցանիշը (փաստացի)	Չափի միավորը

Սույն ակտը կազմված է 2 օրինակից, յուրաքանչյուր կողմին տրամադրվում է մեկական օրինակ:

ԿՈՂՄԵՐԸ

Հանձնեց

 ազգանուն, անուն

 ստորագրություն

Ընդունեց

հայտը նախագծած ներկայացուցիչ՝

 ազգանուն, անուն

 ստորագրություն